

Ս. ՓՐԿԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ

ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR

87 SALISBURY STREET  
WORCESTER, MASS. 01609

TEL. 756-2931

Փետրուար 1, 1967

Գերաշնորհ  
Տ. Թորգոմ Ս. Եպս. Մանուկեան  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի,  
Նիւ Եորք, Ն. Ե.

Սիրելի Արքայան,

Ստորեւ Զերդ Գերաշնորհութեան կը ներկայացնենք Տարեկան Ծխական Անդամական Ժողովի կողմէ ընտրուած Վերստուգիչ Յանձնախումբի եւ Ծխական Խորհուրդի նոր անդամներուն անունները առ ի վաւերացումս:

Տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ Յունուար 26, 1967, Հինգշաբթի երեկոյ ժամը 8.30-ին եկեղեցւոյ սրահին մէջ, հովուի-նախագահութեամբ եւ 625 տրատու անդամներէն 70-ի ներկայութեամբ:

Ժողովը ատենապետ ընտրեց փաստաբան ձորճ Եաղճեանը, իսկ ատենադպիր տիար Մանասէ ձարտարեանը:

Տարեկան Ծխական Ժողովը նկատի առաւ հովուին տեղեկագիրը, ծխական խորհուրդի վարչական-եկեւտական տեղեկագիրները եւ նոր պիւտճէն, որոնք ընդունուեցան: Ապա ժողովը նկատի առաւ Մշակութային Կեդրոնի Ծինութեան Յանձնախումբի տեղեկագիրն ու կառուցման խնդրանքը, զորս ընդունեց:

Ժողովը փակուեցաւ ժամը 11.15-ին, ընտրութիւնները Յունուար 29, կիրակի օր կատարելու որոշումով, իբրեւ շարունակութիւն առաջին նիստի: Բուէարկութեան մասնակցեցան 240 տրատու անձեր:

Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան ձան Թորոմանեան (175 քուէ), Զաւէն Գասպարեան (152 քուէ), Սուրէն Խաչատուրեան (139 քուէ), Ռաֆֆի Եաղճեան (127 քուէ), Վահան Արոյեան (124 քուէ), Հէրրի Սահակեան (113 քուէ), իսկ առաւելագոյն քուէով փոխանորդներն են Կէրրի Տէյիլմէնճեան (96 քուէ) եւ Համբարձում Առաքելեան (93 քուէ):

Վերստուգիչ Յանձնախումբի անդամ ընտրուեցան Եղուարդ Պիլէզէրեան (149 քուէ), Օր. Էնն Տէմիրճեան (146 քուէ) եւ Տիկ. Պարպլըրա Նալգրանեան (117 քուէ), իսկ առաւելագոյն քուէով փոխանորդ՝ Յովհաննէս Թադէոսեան (112 քուէ):

Ներփակ կը գտնէք զանազան տեղեկագիրներու պրակը, ինչպէս նաեւ ընտրութեան ցանկը իր մանրամասնութիւններով:

Յանձնելով սոյն գիրը Արքայանութեանը նկատառութեան, կը խնդրենք ծխական խորհուրդի եւ վերստուգիչ յանձնախումբի անդամներուն վաւերացումը: Մնամք յարգանքով, Դիմիտր ՏԱՐԵԿԱՆ ՄԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

*Միւռնիկ Կրտիչեան*  
Սիւրճի Ս. Վ. Կրտիչեան  
Նախագահ

*George H. Yagjian*  
ձորճ Եաղճեան  
Ատենապետ

*Wecoluccat Deryazumyan*  
Մանասէ ձարտարեան  
Ատենադպիր

Our 75th Anniversary

Dedicated to the faith of our forefathers